

սեպ իջող Նուազարեակը մըլուած եւ հորիզոնական զրիւք վերախուտակուած է գրեթէ զազաթնահայեաց կեցած Դրամասեցեաց-կրեւուն վրայ:

(Շարունակելի:)

Հ. Յ. Տ.

ՍԿԵՒՈՇՅԻ ԱՆԵՏՐԱՆԸ 1197 ԹՈՒՆՎԱՆԵՆ ԼՂՈՂԻ ՀՈՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍԱՐԵՆԻ ԳՐԵԳՐԱՐԵՆԻ ՄԷՋ

(Նպաստ մը հայ մանրանկարչութեան պատմութեան:)

1. Բանի մը խօսք:

Լեհաստանի հանրապետութեան Լվով (Lwów, գերմ. Lemberg, Հին Հայոց՝ Իլով) քաղաքի Հայ Արքեպիսկոպոսարանի Գրադարանը հին ժամանակներէ ի վեր խնամով կը պահէ հայ մանրանկարչութեան սքանչելի յուշակերտ մը, նկարազարդ Աւետարան մը, որ գրուած է 1197/98 թուականին Սկեւոպի վանքին մէջ:

Անոր նկարազարդութիւնը եւ նկարներու ցուցադրութիւնը մինչեւ օրս չէ ներկայացուած հայ գեղարուեստագէտներուն:

Անցեալ դարուն սկիզբը, երբ Հ. Մինաս Բժշկեան¹ կու տար ակնարկ մը Լեհաստանի հայ գաղթականութեան ժամանակակից կեանքի վրայ, յիշատակութիւն չէր ընէր Աւետարանի մասին. հաւանօրէն այն ժամանակ ղեռ չէր մտած Աւետարանը Հայ Արքեպիսկոպոսարանի Դիւանը:

Ուռալին անգամ տեսած է Աւետարանն Հ. Ռաֆայէլ Պարոնչ, անդամ Վիեննայի Միխիթարեան Միաբանութեան, 1877ին, որ ընդօրինակելով անոր Յիշատակարանները մի մի օրինակ զրկած է Վիեննայի եւ Վենետիկի Միխիթարեան Հայրերուն: Հ. Ղ. Ալիշան իւր Միսոսանի մէջ (էջ 74, 98) երկեցս կը յիշատակէ ձեռագիրս, շատ համարում քաղուածներով Յիշատակարանէն:

Աւետարանի մանր նկարազարդութիւնը կը պարտիմ Հ. Գրիգորիս Գալէմբերեանին, որ 90ական թուականներուն այցելելով Լվով, իւր գովելի սովորութեամբ հետաքրքրուած է անով եւ կազմած ճշգրիտ նկարազարդութիւնը: Հ. Գալէմբերեան չէ հրատարակած, սակայն, իւր այս ցուցակազարդութիւնը. ես գտայ զայն իւր անախ պաշտօնագրութիւններուն մէջ:

Երրորդոյն ժամանակներս Աւետարանիս վրայ խօսած են J. Strzygowski եւ Joséf Piotrowski².

¹ Ժամանակագրութիւն ի Լեհաստան, Վիեննայի 1830:

trowski². վերջինս տուած է նաեւ համարում նկարազարդութիւն մը Ձեռագրին եւ հրատարակած է մանրանկարներէն 7 նկար միացոյն: Strzygowski, որ խոստացած էր³ առանձին ուսումնասիրութիւն մը նուիրել Աւետարանի մանրանկարներուն, մինչեւ օրս տուած է միայն նմոյշներ անոր մանրանկարներէն⁴: Երկու նկար ներկայացուցած է նաեւ H. Glück⁵:

Մեր աշխատութիւնը պիտի ըլլայ այս տեղ՝ յեցած Հ. Գալէմբերեանի եւ J. Piotrowskiի տեղեկութիւններուն վրայ, ներկայացնել Ձեռագրին նկարազարդութիւնը, Յիշատակարաններուն ամբողջական հրատարակութիւնը եւ մանրանկարները, որքան անոնք մատչելի եղան մեզի վերոյիշեալ երկասիրութիւններէն: Պիտի կցենք այս ցուցադրութեան նաեւ համեմատ գիտողութիւններ եւ նկատողութիւններ:

Ձեռագիրը անձամբ տեսնելու բախտ չեմ ունեցած: Ձեռքիս տակ եղած նիւթերով թոյլ չեն տար ճշգրիտ գաղափար կազմել Ձեռագրին հնագրական հանգամանքերու եւ յատկապէս մանրանկարներու մանրամասնութիւններու եւ գունաւորման մասին: Իմ ընթերցողներուս ներողամտութիւնը պիտի խնդրեմ, եթէ Ձեռագրիս նկարազարդութիւնը հակառակ իւր ամբողջութեան, մանրամասնութիւններուն մէջ գոհացուցիչ չնկատուի:

2. Ձեռագիրը:

Թուղթ՝ 426: Մեծութիւն՝ 29 X 22 սմ.: Նիւթ՝ սպիտակ մագաղաթ: Կազմ՝ 31 X 24 սմ. փայտակող, կարմիր թաւիչով պատած, ատաս արծաթով կոստղած: Առաջակողմէն չորս անկիւնները չորս աւետարանիչներ մեծագիր. մէջ տեղը՝ խաչըութիւն, Մարիամ եւ Յովհաննէս առ ոտս խաչին. վրան գրերն՝ S W I S Պատկերները միացած են իրարու տալիակ եւ հաստ արծաթով, նոյնպէս կողմն եզերքները պատած են երկու մաս լայնութեամբ արծաթով եւ ունին արծաթեայ կողկապ, որոնց ականջները խլուած են: Յետ-

² Katedra ormiańska we Lwowie w świetle restauracji i ostatnich odkryć. Lwów 1925, էջ 10—11 եւ նկար 33—40: Այս նկարներէն հինգն կիւնէները հաճեցաւ հեղինակը ի ձեռն Գեր. Տ. Պօզոս Վ. Գրք. մըքեանի դիւն արամազրութեան տակ, որուն համար կը յայտենմ հրապարակաւ իմ չնորհակալութիւնը:

³ J. Strzygowski, Kleinarmenische Miniaturmalerei, S. 43.

⁴ J. Strzygowski, Amida. Beiträge zur Kunstgeschichte des Mittelalters von Nordmesopotamien, Hellas und Abendlande (հրատարակուած կից հետեւեալ գործին՝ Max von Berchem, Amida. Matériaux pour l'épigraphie et l'histoire musulmanes du Diyar-Bekr), Heidelberg 1910, էջ 362, 369. եւ իւր Ursprung der christlichen Kirchenkunst, Leipzig 1920, տախտակ XXIV.

⁵ H. Glück, Die christliche Kunst des Ostens. Berlin 1923, նկար 6 եւ 7.

սակողմը կը տեսնուին նոյնպէս չորս պատկերներ՝ չորս լատին սուրբեր. մէջ տեղը Աստուածածինը Յիսուս գրկին, S W վերտառութեամբ, միացած իրարու թանձր եւ լայն արծաթով: Բոլոր արծաթը ոսկեգոծուած է: Կողերուն նմանահանութիւնը տուած է Piotrowski, անդ, նկար 32—34: Գիր՝ խոշոր երկաթագիր՝ միջակ մեծութեամբ: Զարդագիր՝ չորս Աւետարաններու սկիզբը,

կու կողմերը կը կարդացուին Մ Ռ Ն Ի : Կիսախորանին կէս եռաբոլորակին տակ կը տեսնուի Ք Տ ապա՝ «Աւետարան ըստ Մատթէոսի»: EKKA MATΘEOΣ 130 ա, 207 ա, 327 ա: Ամբողջ երեսները գեղազիր գրչութեամբ: Լուսանցազարդ՝ չորս Աւետարանիչներու սկիզբը եւ տեղ տեղ լու-



Նկար 1. Սկեւոպի Աւետարան, 1197:

թղ. 12 ա «Գ» հրէշտակ ձեռքին գիրք. 130 ա «Ս» հրէշտակ թեւաւոր առիւծի վրայ. 207 ա «Բ» թեւաւոր ցուլ. 327 ա «Թ» (տե՛ս նկար 8, 11): Նաեւ բնագրին մէջ շատ տեղեր. գանազան ձեւերով: Խորաններ՝ թղ. 2 ա—10 եւսերեայ թղթին եւ Համաբարբառի խորանները՝ թռչնազարդ, վիշապազարդ, ծաղկազարդ, ոսկեխառն բազմազոյն մանրանկարներով: Թուղթ մը (11) կտրուած հանուած: Կիսախորանի՝ 12 ա, մէջ տեղը Յիսուսի անձինք, գլուխը լուսարձակ խաչով, որուն եր-

տանցքներու վրայ: Մատթէոսի սկիզբը փոքր բոլորակներու մէջ՝ Յիսուս, Դաւիթ, Աբրահամ, Իսահակ եւ Յակոբ: Նկարի՝ թղ. 11 բ, 129 բ, 206 բ, 326 բ, չորս Աւետարանիչներ (տե՛ս նկար 6—10): Բազմաթիւ լուսանցազարդ մանր նկարներ բնագրին մէջ ցրել: Դատարկի՝ թղ. 1, 419, 425, 426: Ժամանակ՝ ՈՅԷ = 1197: Գրիչ՝ Գրիգոր Մլիճեցի Տեղի՝ Մլիճի անապատ եւ Սկեւոս: Ստացող՝ Ստեփանոս կրօնաւոր քահանայ: Տեղեկութիւն՝ Աւետարանն կը պահուի Լվովի

Հայ Արքեպիսկոպոսարանին Գրադարանին մէջ, ներկայիս ի ձեռս Գեր. Յովսէփ Թէո- դորովիչ արքեպիսկոպոսի:

Մատենա է Աւետարան իր չորս Մասե- րովը: Յովհ. Աւետարանին վերջը ունի Ծնա- ցեալ կնոջ պատմութիւնը:

Իլլսաւոր Յիշատակարան (Միջին եր- կաթագրով). 1. Փառք ամենասուրբ երրոր- դութեանն հաւր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ յաւիտեանս յաւիտենից ամէն: Յանձայրա- ծաւալ ծովէն յանձին եւ յանձառ էութենէն յանձուն խորոցն անգիտելի եւ անասելի պատճառաւ, խորհուրդն որ ծածկեալ մեծ եւ սքանչելի շնորհեցաւ մեզ ի հաւրէն բարեաց եւ երեւեցաւ մարմնով ընդ մեզ լինելով. եւ յայտնեցաւ անմարմնոցն մեաւք բազմապա- տիկ իմաստութիւնն Աստուծոյ ըստ Պաւ- զոսի: զոր ծանեան արժանապէս եւ ըստ ար- ժանոցն եւ փառաւորեն անլուելի գոհացո- ղական ձայնիւ զանկարաւտ բնութիւնն Աս- տուծոյ: Իսկ եթէ նոքա այսպէս ըստ իւրեանց բնութեանն եւ մերձաւորութեանն առ որս են, մեք աւտարացեալքս եւ կարաւորս ամենայնի մանաւանդ զի վասն մեր այսքան շնորհք պարգեւեցան, եւ ատեցեալքս սի- բեցեալք եղեալք՝ եւ յաճախեաց ի մեզ շնորհք ըստ առաւելութեան մեղաց որպէս Պաւղոս Քրիստոսիւ վկայեաց ոչ փառաւորել միայն կամ գոհանալ, այլ եւ զանձինս տալ փոխա- նակ մահու նորա որպէս առաքելոց եւ մար- տիրոսացն դասքն. բայց քանզի վերջացաք ի մարմնոյս կրից եւ ի չար պատահեալ ա- լուրցս, որ դիւրին է առ ձեռն պատրաստ՝ զայս ըստ կարի հատուցուք պատմել զփառս նորա եւ յիշել զերախ՝ ոսցն, զի դրեւեռեալս յատիս արձա- կեցէ, եւ զպարտութիւն ծանրութեանս մերժեցէ ի մէջն. եւ այսպէս մի ըստ միովէ. հայհոյութեամբն եւ նախատանաւք զանար- գեալս ի պատիւ փոխեցէ. կալով առաջի Պրիզատոսի եւ Հերովելի, ի ծառայութենէ մեղացն արձակեաց. զեղեան քաղցրացոյց եւ ծարաւամբն զլուր կենաց պարգեւեաց. խոցմամբ կողին ետ մեզ զարբուան կենդա- նութեան շինելով զմեզ տեղի եւ տաճար աստուածութեանն. սքանչելի եւ մեծապա- տիւ արեամբն գնեաց. եւ թաղմամբն ի գլորմանէն ի վիհս մեղաց կանգնաց. եւ աստուածահարչ յարութեամբն կենդանա- ցոյց. եւ համբարձմամբն զթողեալս ի դժոխս, ի վերինն հրաւիրեաց ի կեանս. տալով գհո- զին սուրբ առաքելոցն գրաւական լինել մեզ մինչեւ ի կատարած աշխարհի. որպէս եւ ինքն անսուտ բանին խոստացաւ ընդ մեզ եւ մեզ պարտ է գոհացողական ձայնիւ զմար- զարէին ձայն ասել եթէ ո՛ր խաւսեցի զգաւ- րութիւնս տեսան, լսելի արասցէ զամենայն աւրհնութիւնս նորա. արդարեւ մեծ է գաւ-

րութիւն մեծի մարդասիրութեանն նորա ի մեզ հաւատացեալս. զիարդ զաւրեաց արեամբ եւ մահուամբ շինել զեկեղեցի եւ փոխարկել աստուածային հրաշխւք զանէ՛ծան յաւրհնու- թիւն, զմեղացն ախտ յարդարութիւն. զորն թէ կամեսցի ոք հաւաստեալ զմեծութիւն պարգեւացն փոքր բանիւ չափել զանչափ աստուածատուր շնորհն անհնա՛ր է. վասն զի ինքն եղեալ առաջին վկայ քարոզ եւ աւե- տարանիչ ճշմարտութեանն. եւ ապա ըն- տրեաց աւետարանիչս զորս հոգին սուրբ որոշեաց որպէս զՊաւղոս. զի բազումք յաւ- ժարեցին որպէս Ղուկաս ցուցանք. բայց սու- քա միայն ընտրեցան որպէս եւ Մատթէոս որ քարոզեաց ի Հնդկիս եւ ի Հրէաստան եւ գրեաց Երբայեցոց բարբառով զկնի է. ամբ վերանալոյ փրկչին. Իսկ Մարկոս ի հրամանն Պետրոսի Հովմայեցւոցն իւրեանց լեզուան զկնի Եժ. ամի. Ղուկաս յունարէն Ասիացւ- ացն եւ Բիւզանդացւոց. Իսկ Յովհաննէս զկնի Ծ. ամի գրեաց յԱսիա եւ ի Պատմո- կղզւոջն: Արդ զի որպէս զտնաւրէնութիւնն յառաջագոյն գուշակեցին, այսպէս եւ վասն աւետարանչացն ցուցին. Մովսէս զչորս առ- ուաջս գետոցն. Եղեկիէզ զկառան, եւ Յով- հաննէս մեծն ի ծնունդս կանանց կառք եղեւ ըստ վերնոցն գերբորգութիւնն ի վերայ ինքեան բառնալով. Թողում ասել զայն: Արդ զի մեծ են շնորհքս եւ անհամեմատելի պար- գեւքս որ տուաւ մեզ, զոր ուսեալ ի հոգւ- ւոյն սրբոյ աւետարանչացն ետուն աւետի- վեզ զորդեղրութիւն եւ զերկնից ժառանգու- թիւն. զանմահութիւն եւ զանապականու- թիւն. ի ծառայութենէ զազատութիւն. ի մեղաց զարդարութիւն. եւ բովանդակ փո- փոխունն լինել ի ստուերատեսակ եւ խառնու- լից կենացս յանախտ եւ ի լուսաւոր եւ յերկ- նային կեանս: Եւ մեր զայս ամենայն երախ- տիս ընկալեալ զբարեաց, մահու չափ պար- տապան եմք հատուցանել փոխարէնս ամե- նայնիւ յամենայնի. մանաւանդ ես եղկելի եւ թշուառս Ստեփանոս մականուն Ազաւա- ի բանականս՝ անբանս. յիմատունս՝ անխ- մա(ս)տս. ի շնորհաւորս՝ անշնորհ. ի հան- ճարոյ եւ ի մտաց ներգործականի պակաս- սեալ. եւ զայս ոչ եթէ առ խոնարհութեանն ինչ ասեմ, այլ որպէս եմս տիրապէս եւ ճշմարիտ: Եւ արդ իմ այսպէս գորով՝ պարտ- տահեցի աւուրցս չարութեանն եւ ժամանակի, մանաւանդ դժոխակիր եւ ընդդիմա- չար մարմնոյս. ոչ ունելով կարողութիւն խաշիւ եւ չարչարանաւք ընուլ զհրամանն փրկչին. եւ անհաղորդ կալ կարի անտեղի մեծագոյն տուգանք. համարձակեցայ ըստ սիրոյ եւ գործոց նորին որ բան էր թանձրացաւ եւ վասն մեր մարմին եղեւ. զորն ընկալաք եւ շաւչափեցաք եւ վայելեցաք ունիմք գնչան եւ գհացն կենարար մինչեւ զալուստ նորին. սոյնպէս եւ ես գբանս նոր-


6 Թուղթ մը կամ թղթեր ինկած:

7 Ի լուսանցս՝ Երբայեցերէն:

որ հոգի է եւ կեանք, աշխատութեամբ նա- ւեցի ի կիպրոս եւ գտեալ նիւթ, գրանն ի մարմին փոխարկեցի. զի անյագաբար վայե- լեցից ուրախութեամբ ձեռամբ շաւչափմամբ համբուրիւք, եւ մտաւք եւ հոգւով ի բանէն կենդանացայց. եւ զայս ոչ վայրապար, այլ ի ձեռն մեծահոգակ զովեալ գրչի որ գեր ի վերոյ եւ անհաս գտաւ ի սեռս մեր ոչ միւր- նաւ միայն, այլ եւ երանդոց եւ դեղոց նկա-

չափ եմ ի տաղտկալի եւ ի թանձրադան- զաղ մարմինս եւ զկնի աստի ելլեցս յիշատակ հոգւոյ իմոյ:

Արդ ի թուականիս Հայոց ՈՍԷ. յնձայելն թագաւորութեան Հայոց Լեւոնի քրիստոսա- սիրի որ յիտորինեանց, եւ ի հայրապետու- թեան Տեան Գրիգորիսի կաթողիկոսի, գրեցաւ յերկու հոշակաւոր ուխտս որ առնու- թեր ամուր դղեկաց, ի ստորոտ լերինս Տաւ-



Նկար 2. Սկեւոայի Աւետարան. 1197:

րազարդ վայելչութեամբ. ոչ ըստ զաւրու- թեան եւ կարողութեան իւրոյ արուեստին, այլ ըստ իմունս զիջեալ աղքատութեամբս. արդ մի ոք աղարտեցէ աղաչեմ զխակա- մտութիւն մանկութեանս. որ զանձառ եւ զաստուածագարդ քրիստոսախաւս կենդանի եւ կենսածին բանս յարմարմամբ ի նիւթս դեղապանծ պանուծիւք պանծալի փայլմամբ ի տեսիլ աչաց ցուցանել. վասն զի սա ինձ կենաց կցորդ հաւատ առ հանդերձեալսն եւ յոյս առ նոյն ինքն բան որ մարմին եղեւ որ-

րոսի եւ ի գրուս մայրաքաղաքին Տարսոնի, սկզբնաւորեալ ի մեծանուն անապատ Մը- լիճի ընդ հովանեաւ սրբոյ Աստուածածնին, որ է զամբարան իշխողաց ամուր դղեկի Պա- պառանի. եւ կատարեալ առնութիւն անառ ամբոցի Լամբրաւնի յաւթվան հոշակաւոր ուխտ Սկեւոա. առաջի սրբոյ եւ սքանչելա- գործ Նշանի եւ Փրկչին տաճարի: Արդ տեարք որք յիմոյ նուաստութեանս աստուածասի- րութեան պտուղս նայիք ոգւոյ աչաւք ի բա- նիցս աւետարանութիւն, որով գտէրն մեր

Յիսուս Քրիստոս ի սմա տեսանէք. եւ մարմնոյ հայելով ի պաճուճանս զարդուս, որով պսակեաց զգեղեցիկն քան զամենայն որդիս մարդկան որ սիտեաց ի շրթանց իւրոց զայս աւետարան, նախ աւրհնութիւն, գոհութիւն, եւ երկրպագութիւն մատուցէք Աստուծոյ հաւր եւ միածնի իւրոյ տեսուն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ միւթարիչ սուրբ հոգւոյն, որ արժանի արար զաղքատ եւ զկործանեալ մարդկութիւնս այսպիսի սքանչելի նորոգման եւ փրկութեան որ ի սմա պատմի եւ ի մէջ ուր յայս շնորհ վայելեցաք եւ այժմ ի կարգ մեռելոց դասեցաք գոհութիւն, աւրհնութիւն եւ անուանն Յիսուսի Քրիստոսի ծննդաբերութիւն ընդ երկնաւորացն եւ երկրաւորացը եւ ի սանդարամետական մեռելոցս. իսկ առ սէր եղբարցդ, խոնարհութեամբ եւ արտասուաւք աղաչանք. զի մեք որ մեռելութեամբ մարմնոյ մոռացեալ եմք ի սրտէ եւ աներեւութացեալ յաչաց որպէս զանաւթ կորուսեալ, այս արժանամեծար առհաւատչիւս յիշատակեսցուք ի բանս մաղթանաց ձերոց առաջի փրկչին մերոյ Քրիստոսի. զի զիս զՍտեփանոս որ մեծաշան աշխատութեամբ եւ ըղձամբ սրտիւ ստացայ զսուրբ մատեանս, արժանի արասցէ իւրում ողորմութեանն հանդերձ ծնաւդաւքն իմովք եւ քերք. որ ըստ իմում աղքատութեանս զգեցուցի աւետարանի իմոյ զայս նիւթեղէն պաճուճանքս: Այլ եւ Գրիգոր զբիչ որ յաւթար կամաւք յանձն առ եւ աշխատեցաւ ի սուրբ մատեանս, լիցի ի գթութենէ ձերմէ առ Քրիստոս յիշման արժանի. եւ ինքն տէրն եւ Աստուածն մեր որ կոչեաց զամենեսեան իւր արքայութիւնն եւ ի փառս, ժառանգս արասցէ զճառայքս իւր վիճակի սրբոցն ի լուսաւոր արքայութիւնն իւր, եւ եղիցի աւրհնեալ յաւիտեանս. ամէն:

2. (Մատթէոսի Աւետարանին վերջը՝ ոսկեգիր). Ստացաւք սրբոյ Աւետարանիս զՍտեփանոս պատուեալ աւժութեամբ քահանայութեան ի զասու կրանաւորաց յիշեսջիք ի տէր:

3. (Մարկոսի Աւետարանին վերջը կարմիր թանաքով). Ի յարութեանն հասարակաց ամենեցուն տէր ողորմեա՛ ստացաւք ի սորա Ստեփանոսի եւ ծնաւդաց իւրոց. ամէն:

4. (Դուկասու Աւետարանին վերջը կարմրագիր). Ընդ աւետարուր քարոզիցն համազասեցես եւ զսրտացաւք սորա զՍտեփ:

Յիշատակագրութիւնք 1. (բոլորգիր). Ի թուականիս Հայոց ի ՈԿԸ. հանդես եւ Քրիստոս բարեպաշտ եւ աստուածասէր թագաւորն Հայոց Լեւոն ի Մայիս ամսոյ ի մէկն եւ պատկեր աւուրն չորեքշաբթի 8 որոյ յի-

8 Ըստ մոմարական հաշուին ՈԿԸ թուականը կը համապատասխանէ 26 Յունուար 1218—21 Յունուար 1219 փրկչական տարիներուն: Ուստի ՈԿԸ Մայիս 1 1218ին պիտի հանդիպէր Գ. օրը: Յիշատակագիրը նկատի ունի Հայոց անշարժ մոմար մը, եւ կ'իմանայ ՈԿԸ տարւոյն տակ 1219, երբ ճշդիւ Մայիս 1 օրուն

շատակ նորա աւրհնութեամբ եղիցի. ամէն: Վասն որոյ աղաչեմք զքեզ մարդասէր հայքմամբ արժանապատիւ ընթերցողաց կենդանի բանի քո տէր թողցես զանցանս սորա:

2. (Ուրիշ ձեռքէ բոլորգիր). Զվերջին ստացաւք սուրբ աւետարանիս զպարոն Սուրբուպէկն յիւր հալալ արդեանցն զնեաց զսուրբ աւետարանս ի Սիմէոն ար(եղայ)էս ի յիշատակ իւրեանն եւ իւր կողակցին Մեղիք Սաթուրնն եւ իւրեանց ծնողացն. որ ոք հանդիպի սուրբ աւետարանիս կարգալով կամ աւրինակելով յիշման առնէք արժանի զվերջըրեալ պարոն Սուրբուպէկն. եւ զՏաւաղան վարպետն որ զայս սուրբ աւետարանս մեզ երբ. եւ Աստուած զձեզ յիշէ:

Ի թվ. ՊՀԱ. (1422) եւ Սիմէոն արեղաս եղբայր Յովանիսի ծախեցի սուրբ աւետարանս պարոն Սուրբուպէկն:


3. (Ուրիշ ձեռքէ բոլորգիր). Ի ՌՆԱ. թուականիս Հայոց մեծաց, ի հայրապետութեան սուրբ Էջմիածնի Տեառն տէր Դաւիթ Կաթողիկոսին, եւ ի թագաւորութեան յայսմ նահանգիս, բարեպաշտ արքային երրորդունմ Զրիկմունդին Լեհաց իշխանաց իշխանին, պարոն Թորոս Պեռնաթենց, որդի պարոն Զատիկին առ Աստուած փոխեցելոյն, եռացեալ աստուածային սիրով մեծաւ փախաքանաւք տեսեալ զսուրբ կենսարուի սուրբ աւետարանս հնացեալ եւ անխնամ ի պահողացս վերստին նորոգել երես մեծաւ ծախիւք եւ արձաթապատ զարդարանաւք: Ի փառս Միածնի որդոյն Աստուծոյ: Եւ ի վայելումն մանկանցն նոր Սիոնի յիշատակ իւր եւ համեստ կողակցուն իւրոյ Մարիանէին, եւ մաւրն Աննային եւ ի Քրիստոս հանգուցեալ հաւրն պարոն Զատիկին եւ ամենայն արեան մերձաւորաց իւրոց: Ով պատուական դասք լուսերամից յորժամ հանդիպիք ի յայսմ աստուածարուի սուրբ տառիս յիշեսջիք ի տէր Քրիստոս զամենեսեան առ հասարակ զառաջին ստացողսն եւ զկրկին եւ զվերջին նորոգողս զպարոն Թորոսն եւ զամենայն արեան մերձաւորսն: Եւ պարզեւատուն Քրիստոս ողորմեսցի առ հասարակ յիշելոցն եւ յիշողացը եւ նմա փառք յաւիտեանս ամէն: Յիշեսջիք եւ զիս չինչ մոխիրս Սիմէոն լոկ անուն կրէցս զբող յիշատակարանիս, կաթիլ մի ողորմութիւն խնդրելով ի Քրիստոսէ:

(Նոյն գրով).
Ով զանբարիս ի մէջ բարեաց
Եւ զանարժանս ի մէջ բազմաց
Յամէն զիմաց կամ պաշարած
Որպէս կաքաւ ի յարժրաց

պատկերն ունի Դ. Ըստ Հ. Ղ. Ալիշանի Լեւոն թագաւոր վախճանած է 1219 Մայիս 2ին. Սիսուան 553 իսկ 524, կը գրէ «Ամսամուտ կամ երկրորդ օր էր մայիսի յաւերժայիշատակն այն օր, 1219 թուականին Քրիստոսի, եւ Հայոց ՈԿԸ»: Յիշատակարանս կը խօսի ի նպաստ Մայիս 1ին:

3. Դիտողութիւններ:

Այս յիշատակարաններէն կը տեղեկանանք. 1. Աւետարանս գրուած է «Ի թուականիս Հայոց ՈՒՆ Ե(Ր)Նժայէն թագաւորութեան Հայոց Լեւոնի քրիստոսասիրի որ յիտրենեանց, եւ ի հայրապետութեան տեսուն Գրիգորիսի կաթողիկոսի»: ՈՒՆ կը համապատասխանէ փրկչական 1197, Յու-



Նկար 3. Սկիւտայի Աւետարան, 1197:

Ձիս յիշեցէք ի լի սրտաց
Ըղձովաննէս յետեալ բարեաց
Ձկրկին կազմողս սուրբ տառաց
Եւ թողութիւն արէք մեղաց
Նա որ բաշխօղն է պարզեաց
Արժան առնէ զձեզ պսակաց
Հայր մեղայիւ ով զմեզ յիշեաց
Ներէ Քրիստոս իւր անցանաց
Եւ ազատէ ի տանջանաց: Ամմէն:

նուար 31—1198 Յունուար 30 տարւոյն: Այս թուականին հետ լիով կը համապատասխանէ Լեւոնի թագաւորութիւնը. ըստ Հ. Ղ. Ալիշանի «Լեւոն ընդունի թագ ի Յունաց կայսերէ եւ պսակի ի Տարսոն» 1196ին (Սիսուան, էջ 552, համա. եւ 462), հաւանօրէն տարւոյն վերջերք: Այս շրջանին կը բազմէր կաթողիկոսական աթոռին վրայ Գրիգոր Զ. Ապիրատ, 1194—1203:

2. Գրուած եւ նկարազարդուած է «ի ձեռն մեծահոգի գովեալ գրչի, որ գեր ի վերոյ եւ անհաս գտաւ ի սեռս մեր ոչ մեղանաւ միայն, այդ եւ երանգոց եւ դեղոց նկարազարդ վայելչութեամբ»։ այդ անձնաւորութիւնն է «Գրիգոր գրչի, որ յաւտար կամաք յանձն առ եւ աշխատեցաւ ի սուրբ մատենաս»։ Նա սկսած է իւր օրինակութիւնը «ի մեծանուն անապատ Մըլիճի» եւ աւարտած է «յաւթեվանս հոգիակար ուխտ Սկեւոս»։

Այս «մեծահոգի եւ գովեալ գրչի» հետ նոյն է հաւանօրէն այն «Գրիգոր գրչի» որ գրած եւ նկարազարդած է 1173ին էջմիածնի Մատենադարանի Թ. 1561/1568 Նարեկը Ներսէս Լամբրոնացւոյ համար։ Ես տեսած եւ համբուրած եմ այս թանկարժէք ձեռագիրը, բայց չունիմ այժմ իմ մօտս ծանօթութիւններս, ներկայացնելու ընթերցողներուս։ Գարեգին արքեպ. Յովսէփեան⁹, այսպէս նկարազարդ է դայն։

«Նարեկ. նկարազարդ, ազնիւ մագաղաթ, 15,2 x 11,5 սմ. 336 թերթ։ Գիր՝ փոքր երկաթագիր, սքանչելի, միջին, 10,2 x 7,5 սմ.։ Գրիչ՝ «Զողորմելի գրչիս Գրիգոր աղաչեմ յիշել ի տէր» 28ա։ Ստացող՝ Ներսէս Լամբրոնացի. «Ստացաւ սորա զՆերսէս, զորդի մեծագաւթ սեւաստոսի Աւին յիշես. ի Քրիստոս» 55 բ. տես եւ 115 բ, 174 բ։ Տեղ՝ անյայտ, բայց հաւանօրէն Սկեւոսայի վանքը։ Ժամանակ՝ 1173 թ. փրկչական. «Թու. ՈՒԲ»։ Առաջին երեսն ամբողջապէս ոսկեգիր է. ազնիւ ոսկով են գրուած նաեւ գլուխների սկզբնաւորութեան եւ պարբերութիւնների առաջին տողերը։ Գլուխների վերնագիրները կարմիր եւ բնագրից աւելի փոքր տեսակի երկաթագրով։ Նմոյշ մը իր գրչութեան տեսնումանահանութեամբ Տախտակ ԼԹ, Թ. 64։

Գրչութեան տեղը, զոր Յովսէփեան «հաւանօրէն Սկեւոսայի վանքը» կը համարի, կարող է նաեւ Մըլիճի վանքը ըլլալ։

Այս Գրիգորը չի կրնար նոյնացուիլ ԺԲ. դարու երկրորդ կէսին եւ ի սկիզբն ԺԳ.ին ծաղկող Գրիգոր Սկեւոսայի վարդապետին հետ, որուն գործունէութեան ասպարէզը նոյնպէս Սկեւոսայի վանքն էր։ Նա կենդանի էր դեռ 1219ին¹⁰. Իսկ սա վախճանած է 1215ին, ինչպէս յետագայ յիշատակարանէն պիտի տեսնուի։ Որպէս զի Գրիգոր Սկեւոսայի չչփոթուի գրչիս հետ, վերջինս պիտի անուանեմ Գրիգոր Մըլիճեցի։

Գրիգոր գրչի ուրիշ Աւետարան մ'ալ

⁹ Բարսեղ Հայ հնագրութեան. վարդապետ 1913, էջ 30։
¹⁰ Հմմտ. Սիսուան, էջ 524։ Գրիգոր Սկեւոսայւոյ մասին տես ընդարձակ, անդ, էջ 100—101։ Հաւանօրէն տարբեր անձնաւորութիւն է Գրիգորի Արեւելցի, որ Ներսէս Լամբրոնացւոյ համար կազմած է Կիւրղի Պարսպմանց գիրքը. Սիսուան, 101, ծան. 2։

ձեռնարկած է գրել 1215էն քիչ յառաջ, նոյն Սկեւոսայի մէջ, ի խնդրոյ «Ստեփաննոսի բանի սպասաւորի», բայց անաւարտ թողուցած է վերահաս մահուն պատճառաւ։ Նա հոս ալ կը դրուատուի «մեծահոգի գրչի»։ Եւ վախճանած է «ի բարուք ձերութեան»։ Այս Աւետարանը, զոր ուրիշ ճարտար գրչի մը յաւարտ հասուցած է, կը պահուի այժմ Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքը (Հմմտ. Արարատ, 1910, էջ 885)։ Կարելոր կը համարիմ այս տեղ յառաջ բերել Զեռագրիս այն համառօտ նկարազրութիւնը, զոր հաղորդած է Գարեգին քահանայ Կիրակոսեան։

«Աւետարան, կաշեկազմ, երկասիւն, մեծութիւնը 55 x 66 հրմ. երկաթագրով, ընտիր մագաղաթի վրայ գրած, 319 թերթից բաղկացած։ ունի չորս նկար, լուսանցարդեր, գարդազէր եւ տասն խորաններ։ Խորանների առաջին երկուսը կիսաբոլորակ խաչաձեւ են, իսկ միւսները սովորական ձեւով. բոլորն էլ յոսկենկար խառնուած կապտաւուն եւ գորշագոյն գոյներով։ Առաջին երկուսում զետեղուած է թուղթ Եւսեբի Կարսլիանոսի. մի քանիսն աւետարանացոյց տախտակներ (= Համբարբառ) են։ Պակասում է Ենացեալ կնոջ աւետարանը։ Նկարներն ամբողջ ոսկուց են»։


Յիշատակարան. Փառք... արդ զայս քան կենսացուցիչ եւ բազում բարեաւք առլցեալ, եւ նորոգ ամուր յուսալիւր կաթողին ոգւով եւ խանդակաթ սիրով բանս լուեալ եւ ուսեալ երանելիս այս պատուեալ օծութեամբ քահանայական շնորհիւ Ստեփաննոս վերակարգացեալ անուն սպասաւոր բանի բանին Աստուծոյ, եւ բացայայտող խորհրդոյ նորա։ Սա որպէս հուր բորբոքեալ ի սիրոյ անտի որ ի սուրբան խնդրեաց կցորդել նոյին պսակացն եւ մեծաւ աշխատութեամբ ջանաց ստանալ զկենարար սուրբ Աւետարանն... Արդ եղև սկիզբն գրչութեան սորա ի թուարբերութեանս Հայկազնեան ազգիս ՈԿԻ (22 Յունուար 1214—21 Յունուար 1215) ի հայրապետութեան տեսնն Յոհաննիսի որդւոյ Կոստանդեայ եւ ի թագաւորութեան աստուածապսակ արքայիս Հայոց մեծաց Լեւոնի որդւոյ Ստեհանէի որդւոյ Լեւոնի որդւոյ Կոստանդեայ, յԼոովբինանց...¹¹ ձեռամբ Գրիգորի մեծահոգի գրչի ի սուրբ ուխտին Սկեւոսայ¹² կոչեցեալ. զոր եւ հասեալ ի վերջ սորա՝ ոչ կարաց կատարել զի հասարակաց բնութիւնս զիւրն պահանջեաց, մեռաւ ի բարուք ձերութեան զոր եւ Տէր Յիսուս հանգուցէ զնա ընդ սուրբս իւր։ Իսկ սա մնացեալ թերակատար ի տարակուսանս ընկէց զյատաջատացեալ ստացողս սորա, իսկ իմ տեսեալ զնա յայնպիսի տարակուսանս կամեցայ ընուլ զպակասն եւ առեալ թէպէտ եւ ոչ կատարեալ յարհեստ, սակայն ապաւինեալ

¹¹ Տպ. յԱռովբինանց։
¹² Տպ. Սկեւոսայ։

յԱստուած եւ յաղաւթս... ձեռս եղեալ կատարեցի զսա... ի բարեխաւսութիւն հողւոյ ստացաւրի սորա։ Եղև կատարումն սորա ի թուին ՈԿԻ (22 Յունվ. 1215—21 Յունվ. 1216) ի քաղաքիս Տարսոն, ընդ հովանեաւ սուրբ Նախավկային Ստեփաննոսի»։

3. Զեռագրին ստացիչն է «Ստեփաննոս մականուն Աղամ»։ Յիշատակարանը, որ գրուած է սոյն Ստեփաննոսի բերնով, կ'ա-

նութի» (Արարատ, 1910, էջ 885), բայց ապահովապէս այս Ստեփաննոս առնչութիւն չունի Տարսոնի համանուն արքեպիսկոպոսին հետ, զոր կը յիշէ Կիլիկիոյ Պատմիչը. «Տէր Ստեփաննոս արքեպիսկոպոս Տարսոնի եւ առաջնորդ Մըլիճոյ» (Սիսուան, 470), եւ զոր Հ. Ալիշան «անընդմէջ յաջորդ Ներսիսի Լամբրոնացւոյ» († 14 Յուլիս 1198) կ'ուզէ համարիլ (անդ, էջ 74)։ Ստեփաննոս Աւետարանի



Նկար 4. Սկեւոսայի Աւետարան, 1197:

նուանէ զանիկա «պատուեալ օծութեամբ քահանայութեան ի դասու կրօնաւորաց»։ Նաեւ 1216ի Աւետարանի ստացիչն է «երանելիս այս պատուեալ օծութեամբ քահանայական շնորհիւ Ստեփաննոս վերակարգացեալ անուն (այսպէս սոյ. «Աղամ»), սպասաւոր բանի։ Ուստի թերեւս մէկը Մըլիճի կամ Սկեւոսայի միաբաններէն։ Թէպէտ Նոր Զուղայի Աւետարանին գրչութիւնը աւարտած է «ի թուին ՈԿԻ ի քաղաքիս Տարսոն ընդհովանեաւ սուրբ Նախավկային Ստեփա-

րանին նիւթը՝ մագաղաթը հոգացած է Կիւրոսին։


4. Տեղւոյ մասին հաղորդուած է շատ ճշգրիտ տեղեկութիւն. «գրեցաւ յերկու հոգիակար ուխտս որ առնթեր ամուր դղեկաց, ի սարորոտ յերինս Տաւրոսի եւ ի գլուխ մայրաքաղաքին Տարսոնի, սկզբնաւորեալ ի մեծանուն անապատ Մըլիճի ընդ հովանեաւ սրբոյ Աստուածածնին, որ է դամբարան ի խողաց ամուր դղեկի Պապատանի. եւ կատարեալ առնթեր անառ ամբողջ Լամբրանի

յալթեվան հոչակաւոր ուխտ Սկեւոա, ա-
ռաջի սրբոյ եւ սքանչելագործ Նշանի եւ
փրկչին տաճարի»: Առաջին ծանօթ տեղիքն
է այս, որ կը յիշէ Մլիճի վանքը: Վանքին
գիրքը նման Յիշատակարանիս, բայց աւելի
ճշգրիտ արտայայտութեամբ կը նշանակէ
Մատթէ քահանայ 1283ին¹³:

«յանապատէ հոչակելի,
որ յորջորջի յանուն Մլիճի,

Մլիճի վանքէն ոչ շատ հեռու «սուրնթեր
անձատոյց բերդին Լամբրունի» կը գտնուի
Սկեւոայի վանքը, որ նշանաւորապէս հան-
դիսացաւ յատկապէս ԺԲ. դարու երկրորդ
կէսէն յետոյ, Ներսէս Լամբրոնացւոյ օրով-
եւ պահեց իւր հոչակը նաեւ այնուհետեւ
աւելի քան դար մը (հմմտ. Ս ի ս ու ա ն,
էջ 97—107):

Սկեւոայ այս մէկու կէս դարու ընթաց-
քին նկատուեցաւ ոչ միայն կենդրոն գրա-



Նկար 5. Սկեւոայի Աւետարան, 1197:

է ի սուրբորն Տաւրոսի
լերին մեծի եւ անուանի.
Մերձ ի գղեակ Պապիոսի,
առ սահմանօքն Տարսնի¹⁴»:

¹³ Իսկապէս կը գտնուի Վիեննայի Մխիթարեան
Մատենադարանի Թ. 571, 208 բ. առկէ արտագրուած
է նոյնը Թ. 382ի մէջ: Նոյնը յտառքերուած նաեւ
Սիսուան, էջ 74:

¹⁴ Պապիոսն բերդի եւ Մլիճի վանքին մասին
տե՛ս ընդարձակ Ս ի ս ու ա ն, 70—74:

կան շարժման, այլ եւ արուեստանոցը հայ
գրչութեան արուեստին:

Գրչութեան արուեստի հետ զարգացաւ
հոն նաեւ մանրանկարչութեան արուեստը:
Գրչագոր Մլիճեցւոյ Ժամանակակից կը գտնենք
անուանի նկարիչ-գրիչը Կոստանդին (հմմտ.
Ս ի ս ու ա ն, էջ 84/85 եւ 99):

(Շարունակելի):

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

† ՈՒՍՈՒՅԶԱՊԵՏ ՅՈՎՍԷՓ ՄԱՐԿՈՒԱՐՏ

Անհուն ցաւով իմացաւ խմբագրութիւնս տեղական թերթերէն ուսուցչապետ
Յ. Մարկուարտի արկածական մահուան դժբախտ բօլոր:

Մեծ կորուստ է հայագիտութեան համար այս մահը: Ոչ միայն հայագիտական
ասպարէզի վրայ հոչակուած էր Մարկուարտ, այլ եւ իրանագիտութիւնը եւ առ
հասարակ արեւելագիտութիւնը ողջունած էր իր մէջ հմուտ եւ արդիւնաւոր գիտ-
նական մը:

Ժողովաւաւ էր իր ծանօթութիւնը արեւելեան ժողովուրդներու աշխարհագրա-
կան, լեզուական եւ պատմական իրերուն: Եւ սուր միտքը իր գրչին տակ կը ճառա-
գայթէր լուսաւորելու հին պատմութեան մութ խորշերը:

Հանգուցեալը իր ուսումնասիրութեանց առարկայ ըրած էր հայագիտութիւնը
ոչ միայն իբրեւ բանա-
ւէր, այլ եւ նուիրուած
էր այդ ուսմանց իբրեւ
մեծ հայասէր եւ բարե-
կամ հայ ժողովուրդին:
Իր բողոքը համաշխար-
հական պատերազմի
ընթացքին Հայ ժողո-
վրդեան եղած անիրա-
ւութեան դէմ արտա-
յայտած էր նա տար
սրտով «Հայագրին ծագ-
ման» նուիրած աշխա-
տութեան վերջաբանին
մէջ. եւ հպարտ էր նա
իւր բողոքին վրայ, թէ-



եւ այն հեռացուց իրմէ
սրտակից բարեկամներ,
նոյն իսկ իւր հայրենա-
կիցներու շարքին մէջ:

Դժբախտաբար հան-
գուցեալին կարգ մը
կարեւոր աշխատու-
թիւնները, որոնք կը շո-
շափեն Հայոց Աշխարհն
եւ Պատմութիւնը, կը
մասն դեռուս անտիպ:
Խմբագրութիւնս ըստ
հնարաւորութեան պի-
տի հոգայ ձեռք բերել
զանոնք եւ իւր ինամ-
քին տակ լոյս ընծայել:

Südarmanien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen
այսինքն «Հարաւային Հայաստան եւ Տիգրիսի աղբերակունքը յոյն եւ արաբացի
աշխարհագիրներու համաձայն», մեծ աշխատութիւնը, զոր հանգուցեալը արդէն
1911ին զրած էր խմբագրութեանս տրամադրութեան տակ, եւ սկսած էր
տպագրուիլ մաս առ մաս «Հանդիսի» էջերու մէջ, ընդարձակուած եւ նոր յաւե-
լուածներով ճոխացած լոյս պիտի տեսնէ շուտով Մխիթարեան տպարանէն (8⁰,
իբր 700 էջ): Հեղինակին աշխատածուր խափան եղած էր գործիս տպագրութեան
այսքան երկարաձգման:

Խմբագրութեանս առանձին խնդրանքով հանձնեցաւ Պր. Ա. Աբեղեան գրել
«Հանդիսի», համար ակնարկ մը հանգուցեալի գրական գործունէութեան վրայ,
զոր ուրախութեամբ կը ներկայացնենք մեր ընթերցողներուն:

Խմբ. «ՀԱՆԴԻՍ ԱՄՍՕՐԵԱՅ» ի: